



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

July

296, 297, 298
299, 300, 301

302, 303, 304,
305, 306, 307,
308, 309, 310, 311

2000

572
4-27
ՀԱՍՏԻՐԱԿԱՑ

ԹԻՆ ԳԵՐԱՆ

17949

177343



177343

296
175

ՀԱՍՏԻՆՆԵՐ


ԹՒՆԿԱԲԱՆՈՒԹՅԱՆ

Հեղ. Կոստանդնուպոլիսի
Գրքարան

BIBLIOTHEQUE POPULAIRE

Երևանի Հայկ. Գրքարան

59-1356



№ 305

ԶՄԻՒՌՆԻՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԱՐՈՅ ՏԵՏԵՆԱՆ

1858

831111012

10-1-1871

10-1-1871



BRITISH

1331



10-1-1871

29-296

296-2003

Ն Ը Խ Ը Բ Ը Ն

ՔԱՆԻ որ մարդս միաքը կը բերէ թէ
բնականօրէն և թէ արհեստին ձեռօք
Տեղի յայտնուած բնու թեան սքանչելիքը,
անոր կանոնները, և սահմանները, չի
կրնար ինքզինքը բռնել առանց փառա-
բանութիւն մը տալու ամենազօր այս
հրաշալեաց գոյացուցիչ անձառելի
Մատին :

Վասն զի կայ անանկ մէկը, որ երբ ի-
մանաց աստեղաց հեռաւորութիւնը և
'ի միջոցի գանուած ամենասարսափելի
մտքէ դուրս տարածութիւնը, և անոնց
սոսկալիթխարի յաղթանդամութիւնը
մտածելով՝ չ'ապշի, կը գտնուի՝ մարդ-
կային էակ մը, որ հսկայ սձն մարմնոց՝
երկնային անհուն ընդարձակութեան
մէջ ունեցած շարժումն խորհելով չի
հիանայ : Ո՛վ է սորվեցուցեր թռչունին
իւր բոյնը շինել մէկ կտուցով միայն զար-

մանալի ճարտակութեամբ մը . ճաղիկներուն հրաշալի գոյները ո՞վ ներկեր է և սքանչելի ձևերնին ու կենդանացուցիչ հիանալի բուրմունքնին ո՞վ է տուեր :

Բնութեան աս ամեն սքանչելիքը իրենց տէրը կ'ապացուցանեն : Չկայ բնադէտ մը , բուստբան մը , աստղաբան մը , և երկրաբան մը , որոնց սրտին մէջ խորագոյն թափանցած չըլլայ Աստուածպաշտութիւնը գերագոյն աստիճանաւ . ըստ որում ճանչցածնին Բնութիւնն է :

Բնութեան աս ամենաբազոր կանոններն եղան ահա նաև իմ աս աշխատութեանս սլատճառը , որ սրտիս մէջ 'ի բնէ արծարծուած հուրը բորբոքելով ոյժ մը տուաւ տկար ճտքիս ու տկար գրչիս շարժելու :

Հասարակաց Թանգարանը ծաղկաբաղ մ'է բաղմութիւ բնագիտական գրեաններէ և բնութեան սքանչելիքը նկարագրող յուղուածներէ :

Բնդհանրաբար ջանացի որ աս Տառն և վեց գլխաւոր գիտութիւնները դիւրիմաց կերպիւ , և քաղցր , համառօտ

ու անձանձրոյթ եղանակաւ գրուին , ա-
 նանկ որ հասարակութիւնը կարգացած
 ատենը՝ չդժգոհի և չդանդաղի : Մաս
 որում եթէ Ռուսաբանութեան Հա-
 տորնուս մէջ դնէինք մի ըստ միջէ բու-
 սոց , ծաղկանց բաժանումները , որոնք
 անթիւ են , արդեօք հասարակութիւնը
 քան մը կը հասկընար անոնցմէ . — ոչ ,
 այլ պարագայ տեղը կը կարգար կանցնէր .
 եթէ դնէինք Վիմիաբանութեան Հա-
 տորնուս մէջ Տարերբը և վերջապէս ա-
 նոնց բաղկացութիւնները անգործնական
 կերպիւ , արդեօք տեղեկութիւն մը կը
 ստանար ժողովուրդը . — ոչինչ ամենևին .
 պապկայի պէս կը կարգար կանցնէր . ե-
 թէ դրէինք Աստղաբանութեանը մէջ
 Համաստեղութիւնները և աստղաբաշ-
 խութիւնը երկարօրէն առանց դիտակե-
 րու և գործեաց օգուտ կը քաղէր հա-
 սարակութիւնը . — ոչ երբէք : Ասոնք
 յիրաւի պիտանի են , բայց որուն —
 անոր որ կատարեալ այսինքն գործիմե-
 րով կը սորվի Ռնագիտութիւնը , սակայն
 մեր դիտաւորութիւնը ան չէ , այլ ինչ

պէս վերը ըսինք՝ համառօտ և անձան-
 ձրելի կերպիւ մը գրել և ընծայել հա-
 սարակութեան . ի վերայ այս ամենայնի
 որչափ որ համառօտ՝ պէտք չէ որ իմա-
 նանք բուն նիւթը կարճեցած , որով և
 տեղեկութիւնը քիչցած , այլ ընդ հա-
 կառակը՝ զխուսթեանց միայն բուն ի-
 մասար՝ բաց , կարճ , և կատարեալ կեր-
 պիւ գրուած .

Միտաւոր նպատակս եղաւ Թանգարա-
 նիս մէջ լիովին չէզոք վիճակ մը բռնել ,
 այսինքն տալ միայն նաև մեր ժողովոր-
 դին ան ամենը որ (Աւրօպիոյ) ուսումնա-
 կան աշխարհը կը տայ իր ժողովորդին , և
 մեր աս չէզոքութեան նշանը կարծեմ
 ընթերցողք նշմարած են զանազան պա-
 րագանեքու մէջ . որովհետև բնագիտա-
 կան վէճերու մէկ կամ միւս կողմը չենք
 բռնած և բնագննական երկմտութեանց
 մէկին հակառակելով կամ միւսը ջատա-
 գովելով ստիպած չենք ընթերցողները
 կողմնակցելու , հասոյ բոլորովին ազատ
 թողած եմ ընթերցողները իրենց մաքին-
 երբ բնագիտական երկմտութեան մը

հանդիպեր ենք, կը տեսնուի որ երկու կողմին խօսեցածն ալ դրած ենք՝ ընթերցողաց թողլով ուզած կողմերնին կողմնակցելու :

Մանաւանդ՝ ինչ որ գրեր ենք՝ ճիշդ այն է զոր Աւրոպան կը ջամբէ իր հասարակութեանը, ըսել կ'ուզեմ որ մեր մտքէն ծագած դիտողութիւններ խառնած չենք միւսներուն հետ զոնազան կանոններու նկատմամբ, և մենք մեր միտքը այնմ մասին չենք յայտնած :

Բաղձանքնուս մէկն ալ Առողջաբանութեան Հատորին որչափ որ կարելի է կատարեալ և ազդու ըլլալն էր. բայց Թանգարանիս միւս տետրակներուն նաշելով՝ ասկէ մեծ դիրք չէինք կրնար բռնել մանաւանդ աւելի ծանր տեղեկութիւններ տալ. որովհետև Թանգարանս ըստ մեծի մասին դեռահասակ սըղայոց ձեռքը կ'իյնայ, որոնց համար թէ և բարոյական և առողջական նիւթեր քարոզող բայց ցանկական խօսակցութիւնը փոանգաւոր և գրգռիչ է :

Շատ ջանացի որ Թանգարանիս միջո-

ցաւ ազգին այնպիսի գիտութեանց վրայ տեղեկութիւն տաճք որոնց վրայ մինչև հիմա հիմնական կերպիւ գրած չէ ինչպէս են Գանկաբանութեան, Չգողաբանութեան, Մէսմէրաբանութեան, Արմանաբուժութեան, և Չայնաբանութեան հատորները ։

Աշխարհագրութեան, Թուաբանութեան, ևն. գիտութեանց վրայ տեղեկութիւններ չգրեցինք, քանզի անոնք շատցած են հիմա ազգիս մէջ, և ամեն դպրոցներու մէջ աշխարհագրական տախտակ մը կը գտնուի գրեթէ ։

Արանի՛ թէ մեր աս աշխատութիւնը պարապը չերթար. և որչափ որ փոքրիկ տեղեկութիւններ կը պարունակէ, գոնէ քիչ մը բորբոքէր հասարակութեան հետաքրքրութիւնը գիտութեանց վրայ, որով և այն մեծ դպրոցաց ամենակար ճարտարախօսութիւնները, տրամաբանութիւնները մէկ կողմ դնելով քիչ մ'ալ գոնէ բնագիտութեան հետևէին. մանաւանդ աղքատողջոց համար Գործնական Արհեստներ դրուէին անոնց

մէջ, որ երբ աղքատ տղայ մը, իր հայ
կարանուծիւնը լմնցնէ, երկար բարակ
ճարտարախօսութեանց չհետեւելով՝ ան
Պործնական Արհեստներէն մէկուն հե-
տեէր և կամ լեզուագիտութեան, որով
երբ դպրոցէն ելլէ՝ ընտանիք սնուցանե-
լու կարող ըլլայ :

1857 Սարտ

Գ. ԿՈՍՏԱՆՆԻԵԱՆ

Յ. Պ. Թէ. Ճանապարհորդութեան
և Թէ. զանազան պարագաներու պատ-
ճառաւ Հասարակաց Թանգարանին տը-
պագրութիւնը 1858 ամին կատարուե-
ցաւ, զոր նաև ձրի նուիրեցինք ազգիս՝
յատկապէս որ նպաստամատոյց ըլլայ ա-
նոր ուսումնականութեան յառաջ եր-
թալու :

Ազգերնիս լուսաւորելու գլխաւոր
միջոցներէն մէկն ալ պէտք է ճանչնանք
գիտնական, արուեստական, մանաւանդ
երկրագործութեան, այգեգործութեան
և ասանկ պիտանի արհեստներուն վրայ
կատարելապէս տեղեկութիւն տուող
դրբերուն ազգին ձրիաբար նուիրուիլը :
Երանի՛ թէ այսպիսի նպատակաւ ընկե-
րութիւն մը կազմուէր և շարունակուէր :

1857
 1858
 1859
 1860
 1861
 1862
 1863
 1864
 1865
 1866
 1867
 1868
 1869
 1870
 1871
 1872
 1873
 1874
 1875
 1876
 1877
 1878
 1879
 1880
 1881
 1882
 1883
 1884
 1885
 1886
 1887
 1888
 1889
 1890
 1891
 1892
 1893
 1894
 1895
 1896
 1897
 1898
 1899
 1900

[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page]

[Faint, illegible text, possibly bleed-through from the reverse side of the page]

47

ՀԱՍՏՈՐԱԿԱՑ ԹՄՆԳԱՐԱՆ

ՀԱՏՈՐ Ա.

ԳՆՆԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱՌՕՏ

Phrénologie.



ԶՄԻՒՌՆԻՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՅ ՏԷՏԵԵԱՆ


1858

Въ библіотеку Лазаревскую Института
присвоение изъ
Смирновъ отъ издателя
Арменака Кавуста
Костантъевъ. Получено
черезъ Машемира
Мсерьянца.

Замѣвіе книги:
Народная библіотека
о разныхъ наукахъ,
начиная съ Френологіи
(черепословія) до Химіи.

1859г.

ԴԱՆԿԱՐԱՆՈՒԹԻՒՆ



ՀԱՍՄԱՐԱԿԱՅ ԹԱՆԳԱՐԱՆ

4V

ՀԱՏՈՐ Ա.

611

Գ-27

ԳՆԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՌՕՏ



ԶՄԻՒՌՆԻԱ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԵՂԲԱՐՑ ՏԵՏԵԵԱՆ

1858

17950

STATIONER & PRINTER

1827

STATIONER & PRINTER

STATIONER & PRINTER



7332-57

STATIONER & PRINTER

STATIONER & PRINTER


1827



ԱՐԿՈՅ ԸՆԹԵՐՑՈՂ

ՀԱՍՍԵՐԱԿԱՑ ԹԱՆԳԱՐԱՆ զերնագրով ան-
տրակներ այսուհետև հեռազհետե պիտի շարունակուին ալ-
պուել: Ասնց անշ պիտի խօսացուի բոլոր գլխաւոր գի-
տութեանց Տի Տիպոն Իտալիին շրայ:

Գանակաբանութիւնը ամենէն առաջ հրատարակեցինը:
ըստ որում ազգը այս գիտութեանէ բոլորովին զուրկ մնա-
ցել է:

Գալուստի Արարանդիան:






ՍԲԻՒՅԷԻՅՄԻ ԳԱՆԿԱԲԱՆԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

ՄԵԿ ԲԱՆԻ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

Գ Ա Ն Կ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն

Վ Ր Ա Յ



Գ Ա Ն Կ Ա Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ն կըսուի այն
գիտութիւնը, որով կրնանք ուղեղին զա-
նազան ձևերէն ու տարբեր ցցուածքնե-
րէն մարդուս բոլոր գործողութեանցը,
վարուցը, զգացողութեանցը ու բնու-
թեանցը չափը հասկընալ:

Գանկին մակերեւոյթը (որ ուղեղինը
ըսել է) հետևեալ մասերուն կըբաժնուի,
ինչպէս և սրտիկերին մէջ կըտեսնենք,
որասոնց հետ նշանակուած է:

Աշրո-կարող-լի-նք

Յօժարո-լի-նք

1. Յանկանալ.
2. Որդիքը սիրել.
3. Օճած ու բնական երկիրը սիրել.
4. Բարեկամանալ.
5. Մարտնչելու յօժարել, քաջասիրտ ըլ-
լալ.

6. Կործանելու, և մեռցնելու ախորժիլ.
 7. Օճակել, գաղտնի ընելու հաճիլ.
 8. Իւրացուցանել, գողանալու հաճիլ.
 9. Շինելու, կառուցանելու ախորժիլ.

Օ. Գաղտնի-նք :

10. Ինքզինքը սիրել, ազատ ըլլալու բաղձալ.
 11. Օինքը ուրիշին հաճեցնելու ջանալ.
 12. Օգուշացող ըլլալ.
 13. Բարիք սիրել.
 14. Իրմէ մեծէն պատկառիլ, խոնարհ ըլլալ.
 15. Մտքով հաստատուն մնալ.
 16. Իհիզ՝ ունենալ.
 17. Չի վհատիլ.
 18. Եւելագաշտ ըլլիլ.
 19. Բանաստեղծ ըլլալ, աղէկ գաղաբարել.
 20. Օուարձաբան ըլլալ, և խնդալ ախորժել.
 21. Օաղլտածու ըլլալ.

Մասորական կարողութիւնք

Ի կարողութիւնք

22. Ճանաչել ու զանազանել կարենալ .
23. Չեւրը որոշ ճանաչել, տեսածնե-
րուն նկարը միտքը պահել .
24. Տեսնելով՝ չափել .
25. Ըջափողական կերպիւ մարմնոց ձե-
ւերը ըմբռնել .
26. Գոյները ըմբռնել, անոնց սքանչելիօւ
թեանը հաճիլ .
27. Ճանապարհորդու թիւն սիրել, ճամ-
բաները աղէկ միտքը պահել .
28. Մտաւորական և թուաբանական հա-
շիւներու մէջ ճարպիկ ըլլալ .
29. Համեմատ շահել՝ կարասիքը, հա-
գուստը, և այլն .
30. Յիշել, աշխարհային գործերը աղէկ
ճանչնալ .
31. Եամանակի միջոցները. նուազի չա-
փերը աղէկ գիտնալ .
32. Երգի նուազի ընդունակ ըլլալ
ախորժել .
33. Իտտալ սովորիլ .

Խորհականք

34. Համեմատե՛լ, լճուե՛լ և դատե՛լ կարենալ,

35. Տրամաբանե՛լ, պատճառը գիտնալու բաղձալ:

Թ. Ուտե՛լ խմե՛լ, կերուխուժի սէր ունենալ.

Խ. Կեանքը սիրե՛լ, ապրելու բաղձալ.

Ըստնք ահա բոլորն ալ մարդուս գործողութիւններն են, և եթէ հասկնալ ուղուի թէ մարդ մը ասոնց ո՞րը շատ և ո՞րը քիչ ունի, կրնայ սլատկերին առաջնորդութեամբը անոր գլուխը զննել (խիստ աղէկ դիտողութեամբ) ու գլխին այն մասն որ ցցուած ու խոշոր է՝ ըսել է որ այն մասին յարաբերութիւն ունեցող գործողութիւն կամ զգացողութիւնը շատ ունի այն մարդը. իսկ թէոր գլխին այն մասը ներս գացած է՝ ըսել է թէ այն մասին յարաբերութիւն ունեցող զգացողութիւնը ան մարդը քիչ ունի:

Մարդուս այս զգացողութեանցը չափը գանկին լրայ չի կոյանար, այլ ուղեղին

(ձևերուն) վրայ, ինչպէս և վերը ըսինք,
մենք միայն արտաքնապէս գանկին մա-
կերևոյթէն կրնանք ուղեղին մակերևոյ-
թը զննել, որ մի և նոյն բանն է. վասն
զի ուղեղը ներսէն ինչ ձև որ ունենայ՝
Վանկին մակերեւոյթն ալ նոյնը կուեննայ
և աս պատճառաւ է որ Վանկաբանու-
թիւն կըսուի:



Վանկի պատկերներ դրած եմք հոս,
բայց այն բաժանմանց տեղերը գլխին վը-
րայ աղէկ ու բարակ որոշելու համար
պէտք է գաճէ շինուած Վանկաբանական
գլուխ մը ստացուի, որուն վրայ գիւ-
րին կըլին զննելը, վասն զի վերոյիշեալ
բաժանմունքները բոլորն ալ գծուած են
վրան, անանկ որ եթէ մէկը անոր վրայ
ստիլի ու տեղերը ճանաչէ՝ շատ գիւրին
կերպիւ կրնայ նաև բուն մարդու գլխի
վրայ ալ գտնել ան բաժանմանց տեղերը:

Արդայ ընթերցողաց Գանկաբանութի վրայ քիչ մը տեղն ի տեղուցը տեղեկու թիւն աալու համար հոս սակաւիկ մի երկարօրէն խօսինք ամեն մէկ դործարանին վրայ :

1. Չանկականը՝ մարդուս (ինչպէս և պատկերին մէջ կը տեսնեմք) ետևի կողմն է գլխին, որով և սաստիկ ձանկութեան ժամանակ շատ հեղ մարդս ետևի կողմը կիյնայ : Տղայութեան ժամանակ ուղեղին այս մասը 24^ր կամ 20^ր մասը կը կազմէ բոլոր ուղեղին համեմատութեամբ բայց քանի որ տարիքը կ'առնէ ասի ալ կաճի, անանկ որ արբունքի ժամանակ 8 — 7 — 6 և մինչև հինգերորդ մասը կը կազմէ ուղեղին : Աոր համար արբունքէ ետքը պէտք է ներքինացնել : Սթեմաթիկոս մը կար, որ շատ ատելութիւն ունէր կանանց, և երբէք չամուսնացաւ : սոր գլուխը զննուելով՝ ձանկական մասը շատ տափակ դտնուեցաւ : ուր որ Գութըլիէի գլխին վրայ ընդ հակառակը կար :

2. Օւաւակ սիրելը կանայք աւելի ունին քան թէ էրիկ մարդիկ, ինչպէս և գլխին վրայ կը տեսնուի : Աոր համար

միշտ մայրերը աւելի խնամք ունին իրենց զաւակացը վրայ քան թէ հայրերը, տսիկա անասնոց մէջ ալ կը տեսնուի : Անանկ կը դնէին որ աքաղաղը Արդեսիրու թեան գործարանը չունի , բայց աքաղաղը ամօրցատելով՝ ձագերուն վրայ խնամք կը տանի : Արապի , Հնդկի և Գարայիպի կնիկները շատ Արդեսիրու թիւն ունին , ինչպէս և գլխնուն այն մասը շատ դուրս ելած է :

3 . Օ՛նաճ ու բնակած երկիրը սիրելը ան մարդերուն վրայ խոշոր կ'ըլլայ, որոնք որ միշտ իրենց երկիրները բնակելու հաճոյք մը ունին :

4 . Մարեկամանալու գործարանը ան մարդոց վրայ խոշոր կըլլի, որոնք միշտ ընտանի են : Մտանի կենդանիք շատ դուրս ցցուած ունին այս գործարանը ուր որ վայրենիները չունին : Աւաքիլները կրնաս խմբովին միատեղ տեսնել , բայց ուրիշ կենդանիներ կան , որոնց երկուքը միատեղ չեն կրնար ապրիլ :

5 . Մարանչողական գործարանը արիասիրտերը խոշոր և վհատերը պզտիկ ունին :

6 . Կործանողական գործարանը թէ մարդիք և թէ անասունք ունին :

7. Օ՞րհուկ և գաղտնի ընելու բաղձանքին գործարանը ան մարդերուն և ան կենդանեաց վրայ խոշոր կը գտնուի, որոնք միշտ գաղտնի ընելու կը բաղձան:

8. Իրացուցանելու գործարանը գողերուն վրայ խոշոր կ'ըլլայ նաև կատուի նման կենդանեաց, որոնք իրենց պարենը կը գողնան: Անձեղ թռչունը իր պարենը գողնալէն զատ՝ ուրիշ բաներ ալ կը գողնայ, ինչպէս փայլուն մետաղներ, թանկագին քարեր, զորոնք կ'որոշէ:

9. Ե ինելու գործարանը արջը շատ խոշոր ունի և ինչպէս կը տեսնեմք որ իր կորիւններուն համար խրճիթ կը շինէ: Ամանապէս թռչուններն ալ մեծ ունին այս գործարանը որուն աղդեցութենէ իրենց ձագերուն բոյն կը շինեն: Կ. Պրիանելի գլխուն վրայ այս գործարանը շատ գուրացցուած կը տեսնեմք և արգարև անոր ազդեցութենէ էր որ Իամիդի տակի ճամբան շինեց: Եւ վերջապէս աշխարհիս վրայ բոլոր մեծ գործողութիւններ ընողները այս գործարանս խոշոր ունէին:

10. Անձը սիրելու գործարանը ան մարդիկ խոշոր ունին՝ որոնք միշտ իրենց մխարը կը հաւնին, և ինքրդինքնին ամենէն վեր կ'ուզեն դասել:

11. Օ ինքը ուրիշին հաւնեցընելու գործարանը կանանց գլխին վրայ շատ խոշոր կերակի. և ինչպէս յայտնի կը տեսնենք: Ասիկայ է որուն Գօգեթլի կ'ըսեն:

12. Օ գուշանալու գործարանը այն ազգեցուծիւնն է, որով մարդս վտանգէ ու մնասէ կը փախչի:

13. Արյնպէս բարեք սիրելու գործարանն ալ: Ոմանք կան որ կրնան բարեք մը ընել, բայց չեն ըներ, և ասիկա իրենց այն գործարանը խոշոր չունենալնուն համար է:

14. Պատուելու և պատկառելու գործարանը կանայք աւելի խոշոր ունին: Ինուծիւնը այս գործարանովն է որ մարդուս իրմէ աւելի մեծ մը սյսինքն Աստուած մը ճանչցընել կըտայ:

15. Կամեցողութիւն հաստատուն մնալու գործարանը ան մարդոց վրայ խոշոր կը գտնուի, որոնք որ իրենց մտքին և գիտաւորութիւնը վրայ հաստատ կը մնան:

16. Խիղճ ունենալու գործարանը արդար գատող մեղքըցող և խղճմտանք ունեցող մարդոց վրայ խոշոր կըլլի և ընդհակառակն անգուծներուն վրայ կը տեսնուի:

17. Յուսալու գործարանը կրլումբոս և Նաբօլէօն շատ խոշոր ունեցան : Բսլոր նեղ սիրտ մարդոց վրայ կը տեսնեմք որ այս գործարանը շատ պղտիկ է :

18. Աւելապաշտ ըլլալու գործարանը ան մարդերուն վրայ խոշոր կըլլի, որոնք որ աւելապաշտութիւնը կը սիրեն, ինչպէս Արապները, որոնց գրուածքներէն յայտնի է ինչպէս հազար և մէկ գիշերները :

19. Բանաստեղծները այս գործարանը խոշոր ունին : Ոմանք կան որ չեն կրնար դիտաւորութիւննին խօսքի բերել և խօսել և անոնց գլխին վրայ այս գործարանը շատ ներս գացած է :

20. Ինդալու և դուարձաբանելու գործարանը բոլոր ան մարդոց վրայ խոշոր կըլլայ որոնք որ միշտ ուրախ են և շատ խնդալու ենդակայ : Ինչպէս տղաքները և փոքր կենդանիները :

21. Տեսած բաները ինքնալ նմանցնելու կարողութեան գործարանը դերասանները շատ խոշոր ունին : Ասոր է որ Մի-հալիլի կըսեն :

22. Անաչելու գործարանը տկար և պղտիկ ունեցող մարդիկ՝ տեսած բաներնին կը մոռնան և եթէ վերստին տեսնեն՝

զան չեն յեշեր : Կնասունները շատ զօրաւոր կերպիւ ունին այս գործարանը :

23 . Չեւերը որոշ ճանաչելու և տեսածքաներուն նկարը միտքը պահելու կարողութեան գործարանը պատկերահանները , բժիշկները , ժամագործները , և այլն շատ խոշոր ունին : Գաղղիացիք այս գործարանը աւելի խոշոր ունին քան բոլոր միւս արեւմտեան ժողովուրդները :

24 . Երկրաչափերը , որսորդները , ճարտարպետները , դաշտանկարները , և այլն , և այլն , այս գործարանը շատ խոշոր ունին , ինչպէս Պրիւնէլ և Հերշէլ :

25 . Ոմանք կան որոնք շոշափօղական կերպիւ մարմնոյ մը ձեւը կը հասկնան , այս մարդոց այս գործարանը խոշոր է : Կոյրերը շատ զօրաւոր են այս կողմանէ :

26 . Պատկերահանները շատ խոշոր կ'սենեան այս գործարանը : Մանաւանդ արեւելքի ժողովուրդ , որոնք գոյներու կ'ախորժին :

27 . Ղանապարհորդութիւն սիրելու և ճամբաները աղէկ միտքը պահելու գործարանը Կոլումբոս , Հումպոլթ և այլն և այլն խոշոր ունէին : Ոմանք կան որոնք մէկ հեղձու գալով ճամբաները կը սով-

րին , քննէ անոնց գլուխը ու կը տեսնես
այն մասին գուրս ցցուածը ըլլալը : Անա-
նոց վրայ ալ խիստ աղեկ կը տեսնուի ա-
սիկայ . ձիեր կան՝ զորոնք մինակը ձգես
իր աստուր կը գտնան : Խմբովին ճանապարհ-
հորդող Թռչնոց վրայ ալ այս գործարա-
նը շատ խոշոր կը գտնեմք :

28 . Այս գործարանը անոնք աւելի խո-
շոր ունին , որոնք որ քաջ Թուաբան են ,
ինչպէս Աէյպից , Քասքալ , Էն , Էն :
Նոյնպէս բոլոր Ատղաբաշխերը : Թըռ-
չունները մինչև 4 Թիւր կրնան համրել :

29 . Նաբօլէօն և Ֆրանքլին այս գոր-
ծարանը խոշոր ունէին , ինչպէս և կը
տեսնուի որ խիստ աղեկ կարգադրիչներ
են :

30 . Ան մարդիկ որոնք աշխարհային
գործերը աղեկ կը ճանչնան ու կը յիշեն՝
գլխերնուն այս մասը շատ գուրս ցրց-
ուած ունին :

31 . Նուագահարերը այս գործարանս
խոշոր ունին :

32 . Իրենցմէ երգ հնարողները նուա-
զին Բերպեները ճանաչողները այս գործա-
րանը խոշոր ունին , կենդանեաց մէջ ալ
երգօղ Թռչունները :

33. Խօսելու և սովբելու կարողութե՛ք գործարանը ատենարանները շատ խոշոր ունին: Ընչու շտ անասուններն ալ իրարու հետ կը խօսակցին՝ բայց ալ ան իրենք կը հասկնան: Այս գործարանը աչքին խոշոր ու դուրս ցցուած բլաւն կ'երևի թէ խոշոր է թէ պզտիկ :

34. Բոլոր ան մարդիքը՝ որոնք խոհական կերպիւ գործ կը տեսնեն՝ այս գործարանը խոշոր ունին : Մարդէս ետքը անանոց մէջ կատիկը առաւել ևս օրանկութանկը կրնայ համարուիլ այս կարողութեանս կողմանէ :

35. Ըն մարդիքը որոնք որ պատճառը կուզեն գիտնալ որ և իցէ գործի մը և թէ ու զիչ կը գիտնան և կը տրամաբանեն՝ բոլոր անոնք այս գործարանա խոշոր ունին:

Թ. Արկրամայնները այս գործարանը խոշոր կուեննան :

Խ. Ըն մարդիք որոնք որ մեռնելէ չեն վախեր՝ այս գործարանը խոշոր ունին : Իսկ անոնք որոնք որ մահէն կը վախեն՝ շատ ներս դացած կը գտնեմք այս մասը անոնց դիտին վրայ :

Բնականօրէն տղու մը գլուխը ինչ գան-
 կաբանական կազմուածք որ ունենայ՝ ա-
 նանկ կըլլի անոր բնութիւնը և գործո-
 շու-թիւնները։ Արչափ որ ըլլայ կրթութիւնը
 ազդեցութիւն մը կ'ընէ մարդուս Բան-
 կաբանական կազմուածքին վրայ, ինչպէս
 վայրենիները իրենց կործանողական գոր-
 ծարանէն դրդեալ 'ի գործ կը դնեն ի-
 րենց կիրքը՝ զիրար ուտելով։ Աւրոպա
 ցիք ալ ունին այս գործարանը, բայց
 սղտիկուց ի վեր կրթուած ըլլալով ի գործ
 չեն դներ։ Բայց, անոնց վրայ որ գան-
 կաբանական կազմուածքն ին խիստ սուր է՝
 ոչ կրթութիւն և ոչ ձեծ կրնան զանի
 փոփոխել, ինչպէս Անգղիայի մէջ խա-
 թուն մը կար խիստ հարուստ, սակայն
 գանկաբանական կազմուածքով գող ըլ-
 լալով, ուր որ երթար, ուր խանութը որ
 մտներ՝ բան մը կը գողնար, ասոր համար
 ծառայ մը կարգած էին որ միշտ ետեւէն
 կ'երթար ու գողցած բաներուն գինը կը
 վճառէր։ Ինչո՞ւ դեղձանիկի մը սովորեցու-
 ցած երգդ չէս կրնար ագռաւին ալ սով-
 րեցնել, վասն զի գանկաբանութիւննին
 տարբեր է։

Ի ՆՍԻՆ ՀԵՂԻՆԸ ԿՈՒԹԵՆՆԷ

Եգիպտական նշանագիրք

Սեպեւ, Տեւեւ

Չապեւ

Սաբիւի

Պանկաբանութիւն Էմմաուսք

Եգիպտական նշանագիրք

Սեպեւ, Տեւեւեր

Օպեւ

Սաբիեի

Տեգրանոհի

Գանկաբանոբիան հասանօպ

Լաղրաբանոբիան 99

Չգողաբանոբիան 99

Վիտաբանոբիան 99

Ելիպրաբանոբիան և

Կալանաբանոբիան 99

Կեհրանաբանոբիան 99

Բոսաբանոբիան 99

Չիբաբանոբիան 99

Երողաբանոբիան 99

Եսպրաբանոբիան 99

Լոսաբանոբիան 99

Սագնիսաբանոբիան 99

Մեասրաբանոբիան 99

Նճանաբոթոբիան 99

Սահողրաբանոբիան 99

Չայնաբանոբիան 99



